

## ՄԻ ՏՎՅԱԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1963-ին Թեհրանում լույս է տեսել «Հովհաննես Մասեհյան» գրք-բույկը: Հեղինակը՝ Գևորգ Գարֆի: Առիթը Մասեհյանի մահվան 30-ամյակն էր: Մասեհյանին նվիրված առաջին և առաջմ միակ գիրքն է դա, ուր փորձ է արված Շեքսպիրի անմահ թարգմանչի կենսագրական տրվյալները մի ընդարձակ ակնարկում ամփոփել<sup>1</sup>:

Գրքույկի վերջում հեղինակն ասում է, թե 1964 թվականին լրանում է ոչ միայն Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը, այլև նրա հայ թարգմանչի ծննդյան 100-ամյակը: «Հայ ժողովրդին է մնում,— գրում է Գարֆին,— այդ պատմական թվականին արժեքավորել և գնահատել իր մեծ զավակի համաշխարհային համբավը, որպես Շեքսպիրի հանճարեղ թարգմանիչներից մեկի»<sup>2</sup>:

Մի որոշ իմաստով մարդարեական եղան Մասեհյանի կենսագրի խոսքերը: 1964-ի ապրիլի 23-ից սկսած Մասեհյանի կյանքը և գործը, նրա վաստակի գնահատությունը դարձան հայ թատերական և դրական բանասիրությանը զբաղեցնող հարցերից մեկը: Վերջին երկու տարում Մասեհյանի մասին մեղանում գրվեց շատ ավելի, քան թարգմանչի մահից հետո՝ երեք տասնամյակի ընթացքում: Նա նկատի ունեմ պրոֆ. Վ. Առաքելյանի ուսումնասիրությունները, Մասեհյանի նամակների ի մի հավաքումը, որ կատարեցին Նշ. Մուրադյանը և Վ. Վարդանյանը, վերջիններիս, Հմ. Մարտիրոսյանի և ուրիշների գրած հոդվածները:

Մի այլ առիթով ասել եմ, հիմա էլ՝ կրկնում եմ, որ Մասեհյանի գնահատության հարցը պահանջում է ժամանակ, մասնագիտական նոր ուժերի պատրաստում, և այդ դեպքում միայն կարելի կլինի նրա թարգմանություններին անզրադառնալ ըստ էության՝ գիտական հիմնավոր մոտեցմամբ: Չեմ կասկածում, որ մեր բանասիրական միտքը

Վհասնի դրան, մանավանդ, եթե նկատի առնվեն այդ ասպարեզում կատարվող առաջին քայլերը:

Միանգամայն հասկանալի է և բնական, որ մի մեծ դեմքի, ինչպիսիս Մասեհյանն է, վաստակի պատմական-տեսական լուծումից առաջ կամ դրան զուգահեռ պետք է հավաքվեն ու ճշգրտվեն նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող տվյալները:

Մի տվյալի եմ կամենում անդրադառնալ, որ, սովորաբար, դուրս է մնում Մասեհյանի մասին գրված և նրան բնութագրող ակնարկներից:

Մասեհյանը 1912-ին, ինչպես հայտնի է, նշանակվում է Բեռլինի պարսից լիազոր-դեսպան: Երկրի սահմանադրական օրենքը թույլ չէր տալիս ոչմահմեդականին լինել դեսպան: Այդտեղ դեր են խաղացել, ինչպես ասում են, Նասըր-Օլ-Մուքի համառ պնդումները, այդ պաշտոնի համար Մասեհյանի ունեցած լավագույն նախադրյալները և, ընդհանրապես, դիվանագիտության ասպարեզում բազմաթիվ առիթներով հաստատված հմտությունը:

«Հովհաննես Մասեհյան» գրքից իմանում ենք, որ համաշխարհային պատերազմի տարիներին շատ հայեր են վայելիլ հայ դեսպանի նյութական և բարոյական աջակցությունը: «Այն արյունոտ տարիները, — գրում է Դարֆին, — Մասեհյանի համար մղձավանջային մի շրջան եղավ, նա խորապես տառապեց իր ժողովրդին վիճակված անօրինակ տառապանքը տեսնելով: Ըմբոստացավ նա, ինչպես կըմբոստանար ամեն մի ազնիվ հայ, երբ իր ժողովրդի վիճակը և իրավունքը գերադասում է բուրբ պաշտոններից»<sup>3</sup>:

Ասված է այսքան: Ասված է լավ, նյութի խոր ըմբռնումով, բայց ձևակերպումն ընդհանուր է և անհասկանալի է մնում, թե ըմբոստացումը ի՞նչ ձև ու արտահայտություն է ընդունել:

Խոսքը վերաբերում է Մասեհյանի դիվանագիտական գործունեության այն շրջանին, որը համընկավ մեծ եղեռնին: Դարֆու ասածն ավելի առարկայական դարձնելու նպատակով հիշատակեմ երկու հանգամանք:

1. 1915-ին, երբ տեղի ունեցավ մեծ եղեռնը, Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր:

2. Մասեհյանը պարսից լիազոր-դեսպանի պաշտոնից, որ վարում էր Բեռլինում, ազատվեց 1916-ին:

Կա՞ արդյոք որևէ կապ այս երկու հանգամանքների միջև: Պետք է ենթադրել, որ այո: Եվ եթե այդ կապը պարզաբանվի, Դարֆու միտքը կամ, ավելի ճիշտ, ակնարկածը, ավելի հասկանալի կդառնա:

Նկատի անհնարով և՛ մեկ, և՛ մյուս հանգամանքը, թիրևս կարելի է հնթադրել, որ Մասեհյանք Բեռլինում պաշտոնավարած ժամանակները հակադրվել է դերմտնական կառավարությանը, որպես Թուրքիայի գաշտակցի՝ հզեմի ներստամար նրա բռնած դիրքի կապակցությամբ, երկյուղ չկրելով, որ կարող է կորցնել իր գրադեցրած պաշտոնը: Այլ կերպ չի կարելի մեկնել Գարֆու միտքը, մանավանդ որ նրա գրածի մեջ խոսք կա բմրոտացման մասին:

Մասեհյանի կյանքի մի ավյալ, որ մինչև հիմա նկատի չի առնված նրա կենսագրության մեջ, ավիլի ճիշտ՝ դրա կապակցությամբ մասնույում հղած մի արձագանք լույս է սփռում Գարֆու արած ակնարկի մութ կտրմերի վրա:

1926-ից Պարսկաստանում սկսվեցին մեջլիսի ընտրությունները: Պետք է ընտրվեր նաև հայ պատգամավոր՝ հարավային պարսկահայության կողմից: Այդ մի տեղի համար ստաջագրվել է երկու թեկնածություն՝ Հ. Մասեհյան և Ա. Աղայան: Բնակչության ճնշող մեծամասնությունն իր ձայնը տվել է Մասեհյանի օգտին: Բացի Թեհրանից, որտեղ Աղայանը ստացել է 252 ձայն, Մասեհյանը՝ 414, մնացած հայտերակ վայրերում Աղայանը ոչ մի ձայն չի ստացել (Մալայեր, Բանդարգազ, Սուլթանարագ, Համագան, Փահլավի, Զհարմագ, Նասերի, Մեշեղ) կամ էլ մեկ, լավագույն դեպքում մի բանի, ասենք՝ 7 ձայն (Ղազվին, Քեդգազ, Նոր Զուղա և այլն): Օրինակ, Ռաշտում Աղայանը ստացել է 14, Մասեհյանը՝ 56, Նոր Զուղայում Աղայանը՝ 6, Մասեհյանը՝ 365: Թեհրանից հետո Աղայանը ամենից շատ ձայն է ստացել Փերիալում, ընդամենը՝ 16, իսկ Մասեհյանը՝ 1315<sup>1</sup>:

Այս ամենը ի միջի այլոց:

Ընտրությունների ընթացքում ստանալով 6388 քվե, Մասեհյանը 1927-ին ընտրվում է մեջլիսի հայ պատգամավոր<sup>2</sup>:

Նախընտրական նյութերը, գրված ի պաշտպանություն Մասեհյանի թեկնածության, վկայում են, թե ի՞նչ հատկությունների համար է նա ընտրվել:

Ընդգծվում է, որ նա մարուր և անբիծ անձնավորություն է: Ասվում է, որ նա երկրում ժողովրդականություն է վայելում: Նշվում է նրա բազմակողմանի պատրաստությունը, որով նա ի վիճակի է մեջլիսում արժարժվող հարցերի կապակցությամբ հանդես գալ իր կշռած և հաշվի առնվելիք դատողություններով: Ասվել է նաև, որ նրան պետք

է ընտրել, որովհետև ունի հասարակաշահ նկարագիր, մեծ ծառայություններ է մատուցել իր ժողովրդին և այլն:

Այս բոլորի հետ միասին, հարկավ, նկատի է առնվել ոչ միայն այն վստահութիւնը, որ ունեցել է պարսկական կառավարութիւնը, ընտրելով նրան՝ ոչ-մահամեղախանին իր դիվանագիտական գործերի լիազոր-ներկայացուցիչ օտար երկրներում, այլ նաև այն, որ նա Շեքըսպիրի թարգմանիչն է; «այն Շեքսպիրի, որի գործերի թարգմանութեան գոյութիւնը որևէ ազգի մոտ այդ ազգի մեծութեան և կուլտուրականութեան չափանիշ է համարվում»: Եվ շատ ճիշտ կերպով ընդհանրացված է. «Ահա այդ անգնահատելի գործով մեղ դասել է մեծ ազգերի շարքին»<sup>6</sup>:

Նախընտրական այս դատողութիւնների մեջ հանդիպում ենք մի շատ կարևոր, թեև դուրսից ի միջի այլոց ասված վկայութեան:

«Որպես հայ մարդ,— գրված է իբր պաշտպանութիւն մեջլիսի ապագա հայ պատգամավորի,— Ն. Խ. Մասեհյանը տվել է իր չավագույն ապացուցաները: Տաճկական վերջին գազանութիւններին զոհ եղած տաճկահայ ժողովրդի մարտիրոսագրութեան առիթով իր հայտնած բողոքի համար գրկվեց պաշտոնից»<sup>7</sup>:

Կարծես թե ամեն ինչ պարզվեց:

Պարզ և որոշակի ասված է, որ Մասեհյանը բողոքել է, ասված է, որ նա բողոքել է տաճկական վերջին գազանութիւններին զոհ եղած տաճկահայ ժողովրդի մարտիրոսագրութեան առթիվ: Ասված է նաև, որ հենց դրա համար, այսինքն՝ իր հայտնած բողոքի համար գրկվել է պաշտոնից:

Կարելի է հաստատապես պնդել, որ Իրանը (այն ժամանակ՝ Պարսկաստանը) Բեռլինի լիազոր-դեսպանի պաշտոնից ստիպված է եղել հրկանչել Մասեհյանին՝ Թուրքիայի և Գերմանիայի պահանջի համաձայն:

Թվում է, թե այժմ պարզ է, թե Դարձու ձևակերպումը ինչպես պետք է հասկանալ: Չեմ կարծում, թե Մասեհյանի առաջին կենսագրի այդ ձևակերպումը հետևանք է անիրազեկութեան: Թվում է, թե ճիշտ հակառակը. նա իմացել է, անշուշտ շատ ավելի է իմացել, քան ներկա ճշտումը կարող է պարզութիւն մտցնել հարցի էություն մեջ, բայց ինչ-ինչ նկատառումներ երևի թույլ չեն տվել կենսագրական այդ կարևորագույն տվյալին որոշակիութիւն հաղորդել:

Այս ենթադրութեան օգտին է խոսում և այն, որ թարգմանչի կենսագիրը, անդրադառնալով 1915-ի դեպքերին, թեև չի ասում, որ նրան

աղատել են դեպքանի պաշտոնից, բայց նույն անդում, խոսելով եղևոնի առիթով նրա ըմբոստացման մասին, հաջորդ պարբերությունը սկսում է՝ արձանագրելով. «1916—1927 թվականներին Մասեհյանը պետական պաշտոններից հեռու դանդից»<sup>8</sup>:

Այս արձանագրությունը չափազանց պերճախոս է:

Հիշատակության արժանի է մի փաստ ևս, որ չէր կարող Գարֆուն հայանի լինել. քանի որ նոր են հայտարարել մեր բանասերները:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին 1916-ի հունիսի 14-ին գրած նամակում Մասեհյանն ասում է. «Այն դարձուրելի ճգնաժամը, որի մեջ հայությունը տառապում է այժմ, սրբազան պարտք է դնում ամեն մի հայի վրա՝ ոչ մի քանք չխնայել իր դժբախտ հայրենակիցների դատը պաշտպանելու, կամ նրանց վիճակը մասամբ ամօրելու համար, և ևս վերջինը կլինի, որ մտածելի խույս տալ իմ պարտականությունից»<sup>9</sup>:

Մասեհյանի կյանքն ու գործունեությունը ինչպես հարկն է դեռ ուսումնասիրված չէ: Նոր են միայն այդ ասպարեղում քայլեր արվում: Փաստագրական նյութեր են հավաքվում, նրա կյանքի կամ գործունեության առանձին գրվագների մասին հորվածներ են գրվում: Սակայն ամենից ավելի մութ մնացածը նրա դիվանագիտական գործունեությունն է: Մինչև շուտումնասիրվեն Մասեհյանի գործունեության շրջանի Պարսկաստանի արտաքին քաղաքականության հետ կապված փաստաթղթերը, Բեռլինի, Լոնդոնի և Տոկիոյի դեսպանատների արխիվները, հնարավոր չի լինի նրա կյանքի ամբողջական պատկերն ուրվագծել: Երբ դա արվի, այն ժամանակ էլ, երևի, կհայտարարվի այն փաստաթուղթը, որով նա, 1915-ի աղետալի դեպքերի կապակցությամբ, իր բողոքի ձայնն է բարձրացրել Թուրքիայի կառավարող շրջանների դեմ:

Այդ պարզարանումը և ճշտումը խիստ էական է: Էական է ոչ միայն Մասեհյանի կենսագրությունն ավելի լիակատար դարձնելու իմաստով: Էական է որպես նրա աշխարհըմբռնում, քանի որ թարգմանչական արվեստը թարգմանչի ապրած ժամանակներից ու նրա հայացքներից անկախ մի դրաղմունք չէ: Եվ քանի որ Մասեհյանը իր կատարյալ թարգմանություններն արել է Շեքսպիրի երկերի գերմանական թարգմանություններին ծանոթանալուց և թարգմանական գրականության վերաբերյալ իր ունեցած սկզբունքները վերանայելուց հետո, — իսկ դա համընկնում է Գերմանիայում նրա պաշտոնավարման տարիներին, — ապա միանգամայն բնական է, որ հայրենի ժողովրդի բնաջնջման վտանգը

և այդ առիթով նրա ունեցած ապրումները, հոգեկան տազնապալի պահերը, բողոքն ու ըմբոստացումը պետք է որ իրենց դրոշմը դնեն նրա գեղարվեստական մտածողության վրա, թափանցելով նաև թարգմանությունների մեջ:

#### Ծ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Հ ո վ հ ա ն ն ե ս Մ ա ս հ չ յ ա ն, 1864—1931, մահվան 30-ամյակի առիթով, կազմեց Գ. Դարֆի, Թեհրան, 1963: Այսուհետև Գ. Դարֆի:
2. Նույն տեղը, էջ 31:
3. Նույն տեղը, էջ 9—10:
4. «Գաղափար», 1926, № 37:
5. Նույն տեղը, 1927:
6. Նույն տեղը, 1926, № 34:
7. Նույն տեղը:
8. Գ. Դ ա Ր Ֆ ի, էջ 10:
9. «Շեքսպիրական», 1, Երևան, 1966, էջ 373: